ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2026 թվականի մայիսի 14-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-26/23»

Շրջակա միջավայրի նախարարության կարիքների համար «Ջրավազանային կառավարման պլանների մշակման ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-26/23» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2026 թվականի մայիսի 14-ին ժամը 14:14:21-ին ստացված հարցադրումը և դրանց վերաբերյալ 2026 թվականի մայիսի 15-ին ժամը 10:00-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1: Ելակետային տվյալների տրամադրման վերաբերյալ

Հրավերի Տեխնիկական բնութագրի (Հավելված 1.1) համաձայն՝ Կատարողը պարտավորվում է հավաքագրել բազմամյա հիդրոլոգիական, որակական և ջրային հաշվեկշռի տվյալներ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» (ՀՄԿ) ՊՈԱԿ-ից: Հաշվի առնելով, նախորդ պլանում ներառված տվյալների ծավալը, ինչպես նաև տվյալների ձեռք բերման համար ՊՈԱԿ-ի պաշտոնական գնացուցակը, մեր նախնական և խիստ ընդհանուր գնահատմամբ նմանատիպ ծավալի տվյալների ձեռքբերումը կազմում է շուրջ 12 միլիոն դրամ:

Հարց. Արդյո՞ք Պատվիրատուն սույն գնման ընթացակարգի շրջանակներում հաղթող ճանաչված մասնակցին ապահովելու է անհրաժեշտ բոլոր ելակետային տվյալների անվճար հասանելիություն, թե՞ մասնակիցը պետք է այդ տվյալները ձեռք բերի սեփական միջոցներով՝ 20.000.000 դրամ ընդհանուր բյուջեի շրջանակներում:

Պարզաբանում N 1: Ելակետային տվյալների ձեռքբերումը և պայմանագրի շրջանակներում կիրառումը պետք է կատարվի օրենսդրությամբ նախատեսված կարգով: Համաձայն Հրավերի Տեխնիկական բնութագրի պայմանների Պատվիրատուն ելակետային տվյալների անվճար հասանելիություն չի ապահովում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-26/23» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ **Լ.Զոհրաբյանին:**

Հեռախոս՝ (011) 818 529:
Էլեկտրանային փոստ՝ gnumner@env.am:

«ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-26/23» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով